



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ
Ս. ԽԱԶ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի 11 Ապրիլը Նոր Կիրակի է, որ կը յաջորդէ Ս. Յարութեան Կիրակիին եւ կը կոչուի Կրկնազատիկ:

Կրկնազատիկի տօնին առթիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Տաճարի Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ իր պատգամը:

**ON NEW SUNDAY PRELATE WILL DELIVER THE SERMON AT
HOLY CROSS CATHEDRAL**

Sunday, April 11, 2010, is the first Sunday after Easter, which is called New Sunday.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello and deliver the sermon.

**ՀԱՅ ԿՆՈՋ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹԸ**

Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը, ընդառաջելով Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հայրապետական պատգամին, որ 2010 տարին հռչակած է Հայ Կնոջ Տարի, կազմակերպած է շարք մը ձեռնարկներ:

Այս ձեռնարկներու շարքին է դասախօսական-ճաշի երկրորդ հանդիպում մը, որ տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 15 Ապրիլին, Ազգային Առաջնորդարանի »Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան« սրահին մէջ, հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Բանախօսն է ծանօթ մանկավարժ եւ հոգեբան Տոքթ. Իտա Գարայեան, որ պիտի ներկայացնէ «Յայ Կնոջ դերը զաւակներու դաստիարակութեան մէջ» սիրօր:

Մուտքի նուէրն է \$20 տուար: Յաւելեալ տեղեկութեանց համար, հեռաձայնել Ազգային Առաջնորդարան:

"YEAR OF THE ARMENIAN WOMAN" SECOND LITERARY LUNCHEON TO BE HELD AT THE PRELACY

The second literary luncheon in celebration of the Year of the Armenian Woman will be held at the Prelacy "Dikran & Zarouhie Der Ghazarian" Hall on the afternoon of Thursday, April 15th, 2010.

The luncheon is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and is organized by the Prelacy Ladies Auxiliary.

The luncheon will feature Dr. Ida Karayan, who will speak on "The Role of Arm. Women in Childhood Education"

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Հայ Մշակութային Հիմնարկութեան տարեկան ընդունելութիւն-ընթրիքը տեղի պիտի ունենայ Կիրակի, 11 Ապրիլին, երեկոյեան ժամը 6-ին, Մոնթեպելլոյի «Բաղրամեան» սրահին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:

PRELATE TO ATTEND ACF ANNUAL BANQUET

The annual banquet of the Armenian Cultural Foundation will take place on the evening of Sunday, April 11th, 2010, at "Bagramian" Hall in Montebello.

The Prelate will attend and convey his blessings.

ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՆ

Կազմակերպութեամբ Այնթապի Հայրենակցական Միութեան, Կիրակի 11 Ապրիլին, կեսօրէ ետք ժամը 2-ին, Այնթապի Հերոսամարտի 90-ամեակին նուիրուած տօնակատարութիւն մը տեղի պիտի ունենայ Հոլիվուտի «Տաղլեան» սրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ տօնակատարութեան, պիտի կատարէ

ձեռնարկին բացման աղօթքը եւ պիտ փոխանցէ Առաջնորդ Սրբազանին սրտի խօսքը: Հայր Միւռնի պիտի ընկերանայ Արժ. Տ. Արտակ Քնյ. Տեմիրճեան:

90TH ANNIVERSARY OF THE HEROIC RESISTANCE OF AINTAB

The Aintab Compatriotic Cultural Society has organized a 90th anniversary commemoration of the heroic resistance of Aintab, to take place on the afternoon of Sunday, April 11th, 2010, at "Taglyan" banquet hall in Hollywood.

Very Rev. Fr. Muron will attend and convey the Prelate's blessings. Fr. Muron will be accompanied by Rev. Fr. Ardak Demirjian.

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ



Ս. Յարութեան տօնին առիթով, Կիրակի, 4 Ապրիլին, Արեւմտեան մեր Թեմի եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, յիշատակելու համար Աստուածորդոյն աշխարհ առաքելութեան թագադրումը՝ մահուան վրայ անոր յաղթանակը: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցանեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւ

հաւատացեալներուն ուղղեց Չատկական իր պատգամը, վեր առնելով Ս. Յարութեան տօնին բազմախորհուրդ իմաստը: Ան յիշեց, որ Աստուած իր Միածինը աշխարհ զրկած էր իբրեւ արտայայտութիւն մարդուն հանդէպ իր անսահման սիրոյն, Քրիստոս զոհուեցաւ փրկելու համար մարդկութիւնը եւ հաւատացեալին շնորհելու խաղաղութիւն եւ յաղթանակ:

ՃՐԱԳԱԼՈՅՑ

Աւագ Շաբաթ օր, Ս. Յարութեան տօնի ճրագալոյցին, Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ մատուցանեց Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր

Եկեղեցւոյ մէջ ու աւարտին, հաւատացեալներուն տուաւ Ս. Յարութեան
աւետիսը:

PRELATE CELEBRATES EASTER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH



On Sunday, April 4th, 2010, the Glorious Resurrection of our Lord Jesus Christ was ceremoniously celebrated with a special Easter Divine Liturgy and joyful proclamations of "Christ is risen from the dead, blessed be the resurrection of Christ".

H.E. Archbishop Moushegh Mardirossian,

Prelate, celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale and delivered his message on this most joyous occasion. The Prelate reasserted that Easter is a reminder of the boundless love of our Lord Almighty as He sent His only-begotten Son to die on the Cross to cleanse us of our sin and grant us redemption and salvation.

On Saturday evening, the Prelate celebrated Easter Eve Divine Liturgy at St. Garabed Church in Hollywood and delivered the sermon.

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ



«Արարատ» Տան պատասխանատուներուն եւ Արեւմտեան մեր Թեմի Ազգային Առաջնորդարանին միջեւ սերտ գործակցութեամբ, տարիներէ ի վեր բարի աւանդութիւն մը հաստատուած է, որուն հիմամբ, ամսական դրութեամբ ժամերգութիւն կը կատարուի, ինչպէս նաեւ տօնական եւ այլ

յիշատակելի օրերու, Ս. Պատարագ կը մատուցուի հաստատութեան պատսպարեալներուն համար: Ս. Յարութեան տօնը մէկն է այդ առիթներէն:

Հինգշաբթի, 8 Ապրիլի առաւօտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան եւ հոգեւորականաց դասու անդամները եղան «Արարատ» Տան բնակիչներուն ու պատասխանատուներուն հետ: Առաջին հերթին, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրեր այցելեցին հաստատութեան հիւանդանոցի բաժինը, ուր տեղի ունեցաւ Չատկուան յատուկ արարողութիւն եւ Ս. Հաղորդութիւն տրուեցաւ տարեցներուն: Ներկայ էր Մեծի Տանն Կիլիկիոյ երեց միաբաններէն Գերշ. Տ. Սմբատ Արք. Լափաճեան, որ բնակիչ է «Արարատ» Տան, մասնակից եղաւ արարողութեան եւ թողութեան արձակումը տուաւ:

Այնուհետեւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ հաստատութեան մատրան մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին: Պատարագիչն էր Արժ. Տ. Աւետիս Քիւյ. Թորոսեան, որ այս առիթով տուաւ գեղեցիկ քարոզ մը, վեր առնելով Ս. Յարութեան տօնի խորհուրդն ու անոր ներգործութիւնը՝ քրիստոնէայ հայուն կեանքին վրայ:

Եկեղեցական արարողութիւններէն ետք, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը ճաշի հիւրը եղան հաստատութեան ու սեղանակից դարձան Տան բնակիչներուն: Ճաշի սեղանին շուրջ ստեղծուեցաւ մտերմիկ ու ջերմ մթնոլորտ մը: «Արարատ» Տան բնակիչներ, երգերով ու բարեմաղթութիւններով գեղեցիկ անակնկալներ հրամցուցին հիւրերուն:

Առաջնորդ Սրբազանը իր օրհնութեան խօսքին մէջ բարձր գնահատեց «Արարատ» Տան նուիրեալ ծառայողները եւ աղօթք բարձրացուց առ Աստուած, որ պատսպարեալ բնակիչները ունենան երկար ու առողջ կեանք, իրենց աղօթքներով բարիք տարածեն գիրենք հոգացողներուն ու ծառանգորդներուն:

EASTER DIVINE LITURGY CELEBRATED AT THE "ARARAT HOME" CHAPEL



offered Holy Communion to the residents.

On the morning of Thursday, April 8th, the Prelate presided over Easter Divine Liturgy at Ararat Home in Mission Hills. Prelacy clergy members participated in the Divine Liturgy, which is celebrated each year on this occasion.

Clergy members first visited the nursing facility where the Prelate presided over a prayer services and

The Prelate then presided over Divine Liturgy at the Chapel, which was celebrated by Rev. Fr. Avedis Torossian. Former Prelate H.E. Archbishop Sumbat Lapajian participated in the service.

At the conclusion of the service, the Prelate and clergy were hosted to a lunch by the directors, in which residents also participated.

The Prelate commended the directors and staff for the care they offer to the elderly, and wished the residents good health.
